



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ԼԻՔԱՆԱՆԻ ՀԻՄՊԱՏՈՍ ՄԱՏՈՆԱ ԱՈՒՆ ՂԱԶԱԼ ՀԻՐԸՆԿԱԼԵՑ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ՈՒ ԹԵՄԻՍ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

Շաբաթ, 8 Հոկտեմբերի կեսօրին, Լոս Անճելըսի մօտ Լիբանանի գլխավոր հիւպատոս Տիկին Մատոնա Աուն Ղազալ եւ ամուսինը՝ Տոքթ. Ժոզեֆ Ղազալ իրենց բնակարանին մէջ դիմաւորեցին Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսն ու Թեմիս ժողովականութեան ներկայացուցիչները, ի պատիւ Վեհափառ Հայրապետին սեղմ ճաշկերոյթ մը կազմակերպելով: Վեհափառին կողքին, ներկայ էին Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սուշեղ Արք. Մարտիրոսեան, Արեւելեան Թեմի Առաջնորդ Բարձր. Տ. Օշական Արք. Զօլոյեան ու Թեմիս ժողովականութեան ու գաղութի ներկայացուցիչները: Հիւրերուն շարքին էին Հայաստանի գլխավոր հիւպատոս Գրիգոր Յովհաննիսեան եւ համայնքային ներկայացուցիչներ:

Բարի գալուստի իր խօսքին մէջ, Տիկին Ղազալ Վեհափառ Հայրապետին օրհնութիւնները խնդրեց եւ յայտնեց, թէ մօտէն կը հետեւի այն խանդավառութեան, որ համակած է գաղութիս հայութիւնը՝ հովուապետական այցելութեան առիթով: Առաջնորդ Սրբազանը շնորհակալութեան խօսք ուղղեց ընդունելութեան համար, միաժամանակ մաղթելով, որ Լիբանան մնայ խաղաղութեան ու ապահովութեան մթնոլորտի մէջ: Ներկաներէն՝ դատաւոր Զէյթօ, հակիրճ խօսք մը արտասանելով, հաստատեց, թէ Վեհափառին այցելութիւնը ներշնչման բացառիկ աղբիւր է միաժամանակ նախկին լիբանանահայերուն ու ընդհանրապէս լոս-անճելըսաբնակ լիբանանցիներուն համար:

Վեհափառ Հայրապետը գոհունակութեան արտայայտութեամբ պատասխանեց ողջոյնի խօսքերուն, վերահաստատեց Լիբանանի գերիշխանութեան պահպանման կարեւորութիւնն ու անոր հայութեան յանձնառութիւնը: Ան նաեւ հաստատեց, թէ այս գաղութի զաւակներէն նախկին լիբանանահայեր միշտ կապուած կը մնան Լիբանանի ու նախանձախնդիր եւ անոր ապահովութեան, անկախութեան ու բարօրութեան:

Հրաժեշտ տալէ առաջ, Վեհափառ Հայրապետը յուշանուէր մը յանձնեց հիւրընկալ դիւանագետին:

LEBANESE CONSUL GENERAL HOSTS A LUNCHEON IN HONOR OF HIS HOLINESS CATHOLICOS ARAM I

On the afternoon of Saturday, October 8, 2011 Lebanese acting Consul General Mrs. Madonna Aoun Ghazal and her husband Dr. Joseph Ghazal hosted a luncheon at their residence in honor of H.H. Catholicos Aram I. Joining His Holiness were H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, H.E. Archbishop Oshagan Choloyan, Prelate of the Eastern United States, staff bearer Very Rev. Fr. Mesrob Sarkissian, Consul General of Armenia Mr. Grigor Hovhannissian, Prelacy Councils members, and community representatives.

In her welcoming remarks, Mrs. Ghazal asked for the blessings of His Holiness and stated that she shares the enthusiasm of the community on the occasion of the Pontifical Visit. The Prelate conveyed his thanks for the luncheon, and also expressed his wish for peace and stability in Lebanon. In his remarks, Los Angeles Superior Court Judge the Honorable Judge James Kaddo affirmed that the Pontifical Visit of His Holiness is a great source of inspiration for the Lebanese-Armenian community of Los Angeles.

After expressing thanks for the reception, His Holiness delivered his message. The Pontiff emphasized the importance of safeguarding Lebanon's sovereignty and the commitment of the Armenian community in this regard. His Holiness also stated that the local Lebanese-Armenian community feels a strong bond with Lebanon and is committed to the nation's safety, stability, and splendor.

At the conclusion of the luncheon His Holiness presented Mrs. Ghazal with a memento.